## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մարտի 12-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրում 2020 թվականի հոկտեմբերի 9-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Կատարողի առաջարկության և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության հիման վրա աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված NՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրի կատարման վերջնաժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**12.03.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագրի**

ք. Երևան «09» հոկտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հազարաշեն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ռ. Իգիթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 12.03.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածի ամբողջ տեքստում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող <<119>> թիվը փոխարինել <<149>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034395
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<Հազարաշեն>> ՍՊԸ
ք. Երևան, Պ. Սևակի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470103171510000
ՀՎՀՀ 01816381

Տնօրեն՝

-------------------------- Ռ. Իգիթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
12.03.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրի
09.10.2020 թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N 1.1
12.03.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրի

Օրացուցային գրաֆիկ
ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

| Հ.հ | ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը | Շաբաթների քանակը (ընդամենը 149 օրացուցային օր) | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 1 | Ելակետային նյութերի հավաքագրում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11 | Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

>>:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** | **ԿԱՏԱՐՈՂ՝** |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011034395<br>ՀՎՀՀ 02565827 | <<Հազարաշեն>> ՍՊԸ<br>ք. Երևան, Պ. Սևակի 1<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 2470103171510000<br>ՀՎՀՀ 01816381 |
| Գլխավոր քարտուղար՝<br>________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>---------------- Ռ. Իգիթյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |